ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 58-Ա « 09 » հունվարի 2025թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
09.01.2025թ.
հ. 58-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Զարուհի Կարապետյան /լիազորված անձ/ «ԴՎԻՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ ՓԲԸ	Պարոնյան փողոց, հ.40	հողամաս	«ԴՎԻՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Պարոնյան փողոցի հ.40 հասցեում գտնվող շենք-շինությունների /վկ. հ.12072024-01-0300/ բաժանման հատակագծով առանձնացվող 918.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Հ. Պարոնյան փողոց, հ.40/20	01063CSNBKNH	
2	Արտյոմ Հարությունյան /լիազորված անձ/ Մելանյա Բաբայան	Ռոստոմի /Բ. Խմելնիցկի/ փողոց, հ.71	բնակելի տուն	Մելանյա Բաբայանին պատկանող, Ռոստոմի /Բ. Խմելնիցկի/ փողոցի հ.71 հասցեում գտնվող բնակելի տանը /սեփ. վկ. հ.29/ տրամադրել հասցե՝ Ռոստոմի փողոց, հ.71/3	01063LP2LKLB	
3	Ռուբեն Եղիազարյան /լիազորված անձ/ Բաղդասար Խալաթյան	Բարձրաբերդի փողոց, հ.27/8 և հ.27/10	շինություն	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հ.ԵԿԴ/1578/02/16 վճռով, ձեռքբերման վաղեմության ուժով, Բաղդասար Խալաթյանի սեփականության իրավունքը ճանաչված, Բարձրաբերդի փողոցի հ.27/8 և հ.27/10 հասցեներում գտնվող 51.0քմ մակերեսով շինությանը /հող. սեփ. 46.57քմ, ընդհ. 137.31քմ/ տրամադրել հասցե՝ Բարձրաբերդի փողոց, հ.27/4	01063ESTUHMC	
4	Հարություն և Մկրտիչ Նակաշյաններ	Ռ. Մելիքյան փողոց, հ.48	հողամաս	Հարություն և Մկրտիչ Նակաշյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Ռ. Մելիքյան փողոցի հ.48 հասցեում գտնվող հողամասի /վկ. հ.26122024-01-0123/ բաժանման հատակագծով առանձնացվող 191.33քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ռ. Մելիքյան փողոց, հ.48/1	01073S4ATXWU	

5	Արտյոմ Հարությունյան /լիազորված անձ/ Հարություն Տիգրանյան	Մամիկոնյանց փողոց, հ.15 շենք, հ.32 և Շիրվանզադեի փողոց, հ.15	տարածք	Հարություն Տիգրանյանին սեփականության իրավունքով պատկանող, Մամիկոնյանց փողոցի հ.15 շենքի հ.32 և Շիրվանզադեի փողոցի հ.15 շենքում գտնվող տարածքներին /վկ. հ.22072024-01-0401 և վկ. հ.25072024-01-0318/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Մամիկոնյանց փողոց, հ.15 շենք, շինություն հ.32	01033RJCKGVG	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**